


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԿՈՒՐ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ ընդհանուր ժողովի
21 օգոստոսի 2024թ.- ի թիվ 2024/17 որոշմամբ
Ժողովի նախագահ՝ Արմեն Տեր-Հակոբյան



«Կուր Ինվեսթ» ՓԲԸ

Փողերի լվացման և ահաբեկչության

Ֆինանսավորման դեմ պայքարի

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2024թ.

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Կենտրոնական Բանկի (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի և դրանցում համապատասխանաբար կատարված փոփոխությունների և լրացումների, ՖԱԹՖ ստանդարտների, միջազգային լավագույն փորձի և «Կուր Ինվեսթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1.2 Քաղաքականությունը սահմանում է փողերի լվացմանն ու ահաբեկչության ֆինանսավորմանը, ինչպես նաև միջազգային պատժամիջոցներին հակազդելու Ընկերության կողմից վարվող քաղաքականությունը, իրականացվող այն պարտադիր միջոցառումները և ընթացակարգերը, որոնք կբացառեն Ընկերության միջոցով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների շրջանառությունն ու ահաբեկչության ֆինանսավորումը, միջազգային պատժամիջոցների շրջանցումը:

1.3 Քաղաքականությունը սահմանում է դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները, կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը, սույն Քաղաքականության կատարման հետ կապված Ընկերության աշխատակիցների պարտականություններն ու պատասխանատվությունը:

1.4 Ընկերությունը վարում է այնպիսի քաղաքականություն, որը հնարավորինս բացառում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված և ահաբեկչության ֆինանսավորման աղբյուր հանդիսացող միջոցների ներդրումը կամ շրջանառությունն Ընկերությունում:

1.5 Քաղաքականությունը գործում է Ընկերության ողջ համակարգում, նրանում առկա դրույթները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր մարմինների, կառուցվածքային ստորաբաժանումների, դրանց ղեկավարների և աշխատակիցների վրա: Ընկերության բոլոր աշխատակիցները՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, պետք է հետևողական լինեն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքներին և դրսևորեն իրենց ազնիվ, պատասխանատու, գործարար էթիկայի սովորույթներին համապատասխան բոլոր փոխհարաբերություններում՝ հաճախորդների, մրցակիցների, գործընկերների, Ընկերության բաժնետերերի, պետական, վերահսկող մարմինների հետ և միմյանց միջև:

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

Սույն Քաղաքականության, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված այլ ներքին իրավական ակտերում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

Օրենք	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք:
Գույք	ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ ցանկացած տեսակի նյութական բարիքներ, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտներ, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, գույքային իրավունքներ կամ շահերը հավաստող փաստաթղթեր կամ այլ միջոցներ, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսներ, շահութաբաժիններ

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

	կամ այլ եկամուտներ, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքներ:
Փողերի լվացում (ՓԼ)	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):
Ահաբեկչության ֆինանսավորում (ԱՖ)	Գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ պետք է օգտագործվի կամ կարող է օգտագործվել ահաբեկչության կամ պատանդ վերցնելու/պահելու համար կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ այդ ծառայություններն ուղղված են ահաբեկչության կատարմանը կամ պատանդ վերցնելուն/պահելուն կամ դրանց արդյունքներն օգտագործվելու են ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից:
Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը (ՉՈՉՏՖ)	Գույքի տրամադրումը կամ հավաքումն է կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը զանգվածային ոչնչացման զենքի տարածման (քիմիական, կենսաբանական, միջուկային կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք, ինչպես նաև դրանց փոխադրման հատուկ միջոցներ ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը, մշակելը, տիրապետելը, փոխադրելը կամ իրացնելը, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման հատուկ միջոցներ օգտագործելը, միջուկային զենքի չփոխապետող պետության հումքային կամ հատուկ տրոհվող նյութեր հանձնելը, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ բաղադրամասեր տրամադրելը) կամ ՀՀ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի կիրառման կամ փորձարկման նպատակով:
Ահաբեկչության հետ կապված անձ	Ցանկացած անհատ ահաբեկչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձ, որը ներառվել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ ՀՀ ԿԲ հրապարակված ցանկերում: Քաղաքականության իմաստով սույն սահմանումը ներառում է նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց:
Ավագ ղեկավարություն	Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համար պատասխանատու միավորը, որն իրավասու է Ընկերության անունից ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով որոշումներ կայացնել և գործողություններ իրականացնել:
Գործարք	Ընկերության և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է հաշվետվություն տրամադրող անձի ուսումնասիրության/դիտարկման առարկա: Գործարք կարող է համարվել նաև

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	--	--

	որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն:
Գործարար հարաբերություն	Ընկերության կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:
Կենսական շահերի կենտրոն	Վայր, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը:
Հաճախորդ	Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև անձ, որը Ընկերությանն առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք:
Լիազորված անձ	Հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողություններ իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ:
Իրավաբանական անձ	ՀՀ և/կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն/հիմնարկ, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորում:
Իրական շահառու	Ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և/կամ որը փաստացի վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (քաղաքությամբ փաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը՝ ▪ ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) 20 (քսան) և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, ▪ տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է փաստացի վերահսկողություն այլ միջոցներով, ▪ հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն սահմանման վերը նշված կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:
Հաճախորդի գործարար բնութագիր	Հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ Ընկերության տեղեկությունների (պատկերացումների) ամբողջություն:
Քաղաքական ազդեցություն	Պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային

«Կուրս Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
--------------------	--	--

ունեցող անձ (ՔԱՌԻԱ)	կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը):
Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն	Այն գործարքը կամ գործարար հարաբերությունն է, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.:
Կեղծ («շեղ») բանկ	Բանկ, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գրնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ
Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն (ՀՊՈԻ)	Ընկերության կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնույթագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց, որը ներառում է՝ 1. հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը, 2. գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը, 3. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը
Գործարքի մյուս կողմ	Հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) է կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը:
Ռիսկ	ՓԼ/ԱՖ հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների:
Բարձր ռիսկի չափանիշ	Բարձր ռիսկի չափանիշը ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է ՓԼ/ԱՖ բարձր հավանականության մասին:
Առանց առերես շփման գործարքը, գործարար հարաբերությունը	Հաճախորդի հետ հաստատված գործարար հարաբերություն, երբ գործարար հարաբերության հաստատման և գործարքի կատարման ողջ գործընթացը, այդ թվում՝ համապատասխան վճարումների իրականացումը տեղի է ունենում առանց առերես շփման, ներառյալ՝ առցանց հարթակներում:
Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն	Ընկերության կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում, որի դեպքում, ի տրամին հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն. 1. ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

	ոչսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ, 2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի, ինչպես նաև ՔԱՈՒԱ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար, 3. հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը, 4. ՔԱՈՒԱ դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում:
Ցածր ոչսկի չափանիշ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է ՓԼ/ԱՖ ցածր հավանականության մասին: Բացառություն են կազմում Չհամապատասխանող, Օֆշորային, Միջազգային պարտամիջոցների տակ գտնվող, կոռուպցիոն ռիսկ պարունակող երկրներում կամ տարածքներում գտնվող միավորները:
Հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն	Ընկերության կողմից հաճախորդի պարզաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառում, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝ 1. ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները, 2. իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), 3. ԱԶ-ի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը:
Միջին ոչսկի չափանիշ	Ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) բարձր կամ ցածր ոչսկի չափանիշների բացակայության դեպքում:
Միջազգային պարտամիջոցներ	Երկրների կամ տարածքների, ապրանքատեսակների և/կամ գործունեության ոլորտների և անձանց նկատմամբ կիրառված առևտրային, տնտեսական և ֆինանսական բնույթի միջազգային սահմանափակումներ, արգելքներ, էմբարգոներ, գույքի սառեցման պահանջներ որոշակի անձանց, երկրների և/կամ կազմակերպությունների նկատմամբ՝ ուղղված վերջիններիս կողմից միջազգային անվտանգության համար համընդհանուր սպառնալիք ներկայացնող գործունեությունը և վարքագիծը կանխելուն
Սև ցանկեր	ՓԼ/ԱՖ կազմակերպման և իրականացման ու ՁՈԶ-ի տարածման հետ կապված անձանց վերաբերող՝ ՀՀ ԿԲ, ՄԱԿ ԱԽ, ԱՄՆ գանձապետարանի (OFAC), Եվրամիության (EU) և Միացյալ Թագավորության (UK) կողմից ընդունված և հրապարակված ցանկեր:
Գործարքի, գործարար հարաբերության կասեցում	Կասկածելի գործարքի և/կամ գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք:
Գործարքի, գործարար հարաբերության իրականացման մերժում	Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացում:
Գործարքի, գործարար հարաբերության դադարեցում	Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատում:
Գույքի սառեցում	Ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և/կամ

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

	իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելք, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի փոխադրման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելք:
ՖԱԹՖ	Միջկառավարական անկախ մարմին, որը մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը ՓԼ/ԱՖ և ՁՈՁՏՖ-ից պաշտպանելու քաղաքականություններ և ստարում է դրանց իրագործմանը:
Չհամապատասխանող երկիր կամ տարածք	ՀՀ ԿԲ-ի և ՖԱԹՖ-ի հրապարակած ցանկերին համապատասխան՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք:
Օֆշորային երկիր կամ տարածք	ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող օֆշորային երկիր կամ տարածք, ՀՀ կառավարության և (կամ) միջազգային կառույցների կողմից հրապարակված հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր կամ տարածք:
Բարձր կոռուպցիոն ռիսկ ունեցող երկիր	Երկիր, որտեղ գնահատվել է կոռուպցիայի բարձր մակարդակ համաձայն «Transparency International» կազմակերպության «Corruption Perceptions Index» դասակարգման և (կամ) միջազգային այլ կազմակերպության կողմից հրապարակված դասակարգման համաձայն:
Տիպաբանություն	ՀՀ ԿԲ իրավական ակտերով, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված՝ ՓԼ/ԱՖ և ՁՈՁՏՖ ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա
ՓԼ/ԱՖ ռիսկի ախորժակ	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության այն մակարդակը, որը կազմակերպությունը պատրաստ է ստանձնել իր նպատակներին հասնելու համար՝ միևնույն ժամանակ պահպանելով օրենսդրական և ներքին իրավական բոլոր պահանջները:
ՓԼ/ԱՖ մնացորդային ռիսկ	Ընկերության գործունեությանը բնորոշ ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծության վերջին բաղադրիչն է, որը ձևավորվում է ՓԼ/ԱՖ ներհատուկ ռիսկի և ներքին հսկողության համակարգի արդյունավետության գնահատման արդյունքում:
Ընկերության կառավարման մարմին	Գործադիր տնօրեն, Ընդհանուր ժողով:
Ներքին դիտարկումների մարմին	Ընկերության ՓԼ/ԱՖ կանխարգելմամբ և պատժամիջոցների համապատասխանությամբ զբաղվող ստորաբաժանում կամ աշխատակից կամ մասնագիտացված գործունեություն իրականացնող համապատասխան անձ:
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն
ՆԴՄ	Ներքին դիտարկումների մարմին

Առնչվող փաստաթղթեր

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք	
---	--

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ» (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 07.10.2014թ. թիվ 279-Ն որոշմամբ)	
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակ	Հավելված 1

ԳԼՈՒԽ 3. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1 Ընկերության ղեկավարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի՝ Ընկերությունում ընդունված ներքին իրավական ակտերի պատշաճ ներդրման, դրանցում սահմանված ընթացակարգերի և պահանջների վերաբերյալ աշխատակիցների իրազեկվածության, ինչպես նաև աշխատակիցների ՀՀ օրենսդրությանը և Ընկերության ներքին ընթացակարգերի խախտմանը հանգեցնող հանձնարարականներ տալու համար:

3.2 Ընկերության ղեկավարությունը ապահովում է, որպեսզի Քաղաքականությամբ սահմանված գործառույթներն իրականացնող աշխատակիցները ՀՀ ԿԲ սահմանված կարգով և/կամ ներքին իրավական ակտերով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա ձեռք բերեն որակավորում, համապատասխանեն Ընկերության և Լիազոր մարմնի կողմից սահմանված այլ չափանիշներին: Ընկերության կողմից սահմանվող չափանիշներն են.

3.2.1 Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը պետք է ունենա բարձրագույն կրթություն և առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական համակարգում, իսկ ՆԴՄ ղեկավարը նվազագույնը 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

3.2.2 ՆԴՄ ղեկավարը և ավագ մասնագետը (առկայության դեպքում) պետք է ունենան ոլորտում հայտնի ասոցիացիաների կողմից տրամադրված (ICA, ACAMS) միջազգային մասնագիտական որակավորում, իսկ ՆԴՄ մասնագետը՝ առնվազն ՀՀ Բանկերի Միության կողմից անցկացվող Ներքին դիտարկումների մարմնի մասնագիտական որակավորում:

3.2.3 Ներքին դիտարկումների մարմնի աշխատակից չեն կարող լինել այն անձինք, ովքեր.

- 1) կատարել են դիտավորյալ հանցագործություն, որի համար դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,
- 2) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- 3) սնանկ են ճանաչվել և ունեն չմարված (չներված) պարտավորություններ,
- 4) քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
- 5) ունեն բացասական գործարար համբավ ֆինանսական համակարգում,
- 6) չեն համապատասխանում սույն Քաղաքականության սույն 3.2 կետով սահմանված պահանջներին,
- 7) փոխկապակցված են Ընկերության ղեկավարների հետ:

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

3.3 Ընկերությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ներդնումը (այդ թվում՝ ներքին իրավական ակտերի մշակումը, վերանայումը և հաստատման ներկայացումը) և վերահսկողությունն իրականացվում է ՆԴՄ-ի կողմից, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, միջազգային ստանդարտներով և պահանջներով, Ընկերության կանոնադրությամբ, սույն Քաղաքականությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով, Գործադիր Տնօրենի հրամաններով ու կարգադրություններով:

3.4 Ընկերության Ընդհանուր ժողովը՝

3.4.1 սահմանում է Քաղաքականությունը, հաստատում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերը, ինչպես նաև այդ գործառույթներն իրականացնող ստորաբաժանումների կանոնադրությունները և/կամ կանոնակարգերը,

3.4.2 համաձայնություն է տալիս Գործադիր Տնօրենի կողմից ՆԴՄ աշխատակիցների նշանակման կամ ազատման վերաբերյալ,

3.4.3 հաստատում է Ընկերության ՓԼ/ԱՖ կանխարգելման նպատակով տարեկան ծրագիրը, քննարկում և հաստատում է այդ ծրագրի կատարման հաշվետվությունները, հսկողություն է սահմանում այդ ծրագրերի իրագործման նկատմամբ,

3.4.4 հաստատում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտներում Ընկերության ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները,

3.4.5 քննարկում և հաստատում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտին վերաբերող Ընկերության ներքին և արտաքին աուդիտի և/կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված եզրահանգումները, թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագրերը և հսկում դրանց իրականացումը,

3.4.6 անհրաժեշտության դեպքում հանձնարարում է ՆԴՄ պատասխանատուին Քաղաքականությամբ սահմանված գործառույթների մասով Ընկերությունում իրականացնել ուսումնասիրություններ/ստուգումներ, քննարկում և հաստատում է դրանց արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,

3.4.7 սահմանված հաճախականությամբ, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ քննարկում և հաստատում է Ընկերության ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտին առնչվող ՆԴՄ հաշվետվությունները

3.5 Ընկերության Գործադիր Տնօրենը՝

3.5.1 Իրականացնում է ՆԴՄ աշխատակիցների ընդունման և/կամ ազատման գործընթացը

3.5.2 ապահովում է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտի օրենսդրությամբ սահմանված պահանջների և Ընկերության ներքին իրավական ակտերի, այդ թվում սույն Քաղաքականության ամբողջական և արդյունավետ ներդրումը, կիրառումը և դրա իրականացման նկատմամբ հսկողությունը,

3.5.3 ապահովում է Ընկերության աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,

3.5.4 ապահովում է ՓԼ/ԱՖ կանխարգելման արդյունավետ համակարգի իրագործման համար համարժեք և բավարար նյութական, տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների առկայություն,

3.5.5 ապահովում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտի մասով ուսումնասիրությունների, ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	--	--

3.6 Ընկերությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է հսկողության երեք օղակների կառավարման մոդելի վրա, որտեղ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասով Ընկերության հսկողական առաջին գծի գործառույթները վերապահված են սպասարկման ստորաբաժանմանը և Պատասխանատու աշխատակիցներին, հսկողական երկրորդ գծի գործառույթները՝ ՆԴՄ-ին, իսկ պաշտպանական երրորդ բնագիծը վերապահված է ներքին աուդիտին:

3.7 ՆԴՄ աշխատակիցները Քաղաքականությամբ և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ են և ունենան Ավագ ղեկավարության կարգավիճակ:

3.8 ՆԴՄ աշխատակիցներն իրավունք ունեն Ընկերության կառավարման մարմիններին անմիջականորեն ներկայացնելու Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու Ընկերության կառավարման մարմինների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող հարցերի քննարկմանը:

3.9 ՆԴՄ աշխատակիցներին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են Ընկերության կողմից ձեռքբերվող ու պահպանվող ՀՀ օրենսդրությամբ և Քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները՝ այդ թվում՝ հաճախորդների հաշիվներին և կատարված գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերը:

3.10 ՆԴՄ աշխատակիցներն իրավունք ունեն գործարքների կամ գործարար հարաբերությունների, ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել Ընկերության ցանկացած աշխատակցից:

3.11 ՆԴՄ-ն՝

3.11.1 ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,

3.11.2 կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ, պահպանում է դրանց արդյունքները,

3.11.3 իրականացնում է գործարքների կամ գործարար հարաբերությունների կասկածելի որակում, կասեցում, իրականացման մերժում կամ դադարեցում, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցում՝ հանդիսանալով վերջնական որոշում կայացնող,

3.11.4 ապահովում է Ընկերության անունից ՀՀ ԿԲ ներկայացվող պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների, կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների գծով հաշվետվությունների ներկայացումը,

3.11.5 տրամադրում է խորհրդատվություն և օժանդակում է Ընկերության կառավարման մարմիններին ու աշխատակիցներին՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված իրենց գործառույթները կատարելու հարցերում,

3.11.6 իրականացնում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում Ընկերության աշխատակիցների ուսուցում (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրություն, առնչվող Ընկերության ներքին իրավական ակտեր, գործնական օրինակներ),

3.11.7 իրականացնում է Ընկերության նոր պրոդուկտների, ֆինանսական գործիքների, գործընթացների ներդրման և/կամ դրանց էական փոփոխությունների դեպքում ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատում,

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

3.11.8 պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է Ընկերության կատարած գործարքների և հաստատված գործարար հարաբերությունների, Ընկերության աշխատակիցների գործողությունների համապատասխանությունն Օրենքին, Քաղաքականությանը և դրանց հիման վրա ընդունված Ընկերության ներքին իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ՆԴՄ-ն հաշվետվություն է ներկայացնում Ընկերության կառավարման մարմիններին:

3.11.9 ապահովում է ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ստորաբաժանման պարտականություններին շրջանակներում սահմանված այլ գործառնությունների և պարտականությունների իրականացումը:

3.12 ՆԴՄ-ն վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովում ՀՀ ԿԲ-ին Օրենքով և Քաղաքականությամբ սահմանված հաշվետվությունների տրամադրումը և Ընկերության կողմից ընդունված այլ ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացումը:

3.13 ՆԴՄ-ն գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ իր կայացրած որոշման մասին տեղեկացնում է Ընկերության կառավարման մարմիններին, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ ԿԲ -ին տրամադրելուց հետո:

3.14 ՓԼ/ԱՖ կանխարգելումը Ընկերության յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն է և Ընկերության աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում հաճախորդի կամ կոնտրագենտի կողմից ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների առկայության մասին պարտավոր են ՆԴՄ-ին անհապաղ տեղեկացնել:

3.15 ՓԼ/ԱՖ կանխարգելմանը վերաբերող ՆԴՄ կողմից ուղարկվող գրությունները, հանձնարարականները և կարգադրությունները ենթակա են պարտադիր կատարման Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից:

3.16 Սպասարկող ստորաբաժանման աշխատակիցներն ու ստորաբաժնումների ղեկավարները՝

3.16.1 պարտավոր են սույն Քաղաքականությամբ սահմանված միջոցներ ձեռնարկել Ընկերության հաճախորդների կամ երրորդ անձանց կողմից իրականացվող կասկածելի գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ:

3.16.2 իրավունք չունեն այլ անձանց, ինչպես նաև այն անձին, որի վերաբերյալ տեղեկություն է տրամադրվում Ընկերության Ներքին դիտարկումների մարմնին, հայտնելու տեղեկության տրամադրման փաստի մասին:

3.16.3 Քաղաքականության պահանջների պատշաճ կատարման նպատակով համագործակցում են Ներքին դիտարկումների պատասխանատուի հետ:

3.17 Ընկերությունը Օրենքով, իրավական այլ ակտերով և սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով Լիազոր մարմնին է ներկայացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ՝ Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով և սույն Քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները, այդ թվում օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները:

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

3.18 Ընկերությունը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին Օրենքով և սույն Քաղաքականությամբ նշված տեղեկությունները տրամադրում է բացառապես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 4. ՌԻՍԿԻ ԱՆՈՐԺԱԿ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

4.1 Ընկերությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման համակարգի համապարփակ ներկայացման նպատակով Քաղաքականությամբ սահմանվում են Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակը և ՓԼ/ԱՖ ռիսկերի զսպման հիմնական սկզբունքները: ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման մանրամասն գործընթացները, գործիքները, ինչպես նաև դրանցից բխող այլ խնդիրները նկարագրվում են Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» Ընթացակարգում:

4.2 Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակը սահմանվում է հաշվի առնելով այն միջավայրը, որտեղ Ընկերությունը գործունեություն է ծավալում, դրանից բխող խոցելիություններն ու սպառնալիքները, Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և պատժամիջոցների համապատասխանության ներքին հսկողության մակարդակը և կարողությունները, Ընկերության բիզնես նպատակները և երկրի ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքները:

4.3 Ընկերությունը սահմանում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակի որակական և քանակական չափանիշներ: Կախված սահմանված չափանիշներից՝ նախատեսվող գործարար հարաբերությունները և/կամ գործարքները կարող են Ընկերության ռիսկի ախորժակից դուրս լինել, այսինքն՝ արգելվել, մտնել ռիսկի ախորժակի մեջ, սակայն որոշ սահմանափակումներ ունենան (հնարավոր լինեն միայն որոշակի պայմանների կիրառման դեպքում) և դասակարգվել որպես բարձր ռիսկային հաճախորդներ:

4.4 Ընկերության ռիսկի ախորժակի որակական և քանակական չափանիշները սահմանվում են սույն Քաղաքականությանը կից Հավելված 1-ով և ենթակա են առնվազն տարեկան վերանայման:

4.5 Քաղաքականության հիման վրա ձևավորվում են Ընկերության ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման մեխանիզմները՝ նպատակ ունենալով ժամանակին բացահայտել, գնահատել և զսպել ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը:

4.6 ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի գնահատումն իրականացվում է Ընկերության ՓԼ/ԱՖ ներհատուկ ռիսկի և դրա կառավարմանն ուղղված ներքին հսկողության համակարգի գնահատման հիման վրա, որի արդյունքում Ընկերությունը գնահատում է իր գործունեությանը բնորոշ ՓԼ/ԱՖ մնացորդային ռիսկը՝ նպատակ ունենալով տարանջատել ընդունելի և անընդունելի ռիսկերը և ներդնել ռիսկերի պատշաճ կառավարման համակարգ: ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը վերանայվում են ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:

4.7 Ընկերությունը բացահայտում և գնահատում է ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Ընդ որում՝ սույն կետով սահմանված ռիսկերը բացահայտվում և գնահատվում են մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

4.8 Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Ընկերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս՝ ՓԼ/ԱՖ ռիսկը գնահատվում է բարձր, միջին կամ ցածր:

4.9 Բարձր ռիսկային հաճախորդների նկատմամբ կիրառվում է հավելյալ ուսումնասիրություն, միջին ռիսկային հաճախորդների նկատմամբ՝ պատշաճ ուսումնասիրություն, իսկ ցածր ռիսկային հաճախորդների նկատմամբ կարող է կիրառվել պարզեցված ուսումնասիրություն:

4.10 Պարզեցված ուսումնասիրություն չի կարող իրականացվել գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության դեպքում կամ ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում, բացառությամբ երբ առկա է միջին կամ բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է ցածր ռիսկի գործարք, որը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

5.1 Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը, Լիազոր մարմնին է տրամադրում պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ, որոնց տրամադրման կարգն ու ժամկետները կարգավորվում են Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին Ընթացակարգով և ՀՀ ԿԲ համապատասխան որոշումներով: :

5.2 Կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների բացահայտման նպատակով Ընկերությունում իրականացվող գործարքները/գործարար հարաբերությունները ՆԴՄ-ն համադրում է Լիազոր մարմնի կողմից հրապարակած կասկածելիության ուղեցույցների և տիպաբանությունների, սակայն չի սահմանափակվում դրանցով:

5.3 Ընկերությունը կարող է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել Լիազոր մարմնին նաև այն դեպքերում, երբ այդ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում Օրենքից, Լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներից, սույն Քաղաքականությամբ սահմանված կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից, սակայն դրա կատարման տրամաբանությունը և շարժը (դինամիկան) հիմք են տալիս ենթադրելու, որ այն իրականացվում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

5.4 Գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ դրանց կատարման փորձը պետք է որակվի որպես կասկածելի և դրա մասին սույն Քաղաքականությամբ սահմանված հաշվետվությունն անմիջապես տրամադրվի Լիազոր մարմնին՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հիմքերի կամ չափանիշների հայտնաբերման դեպքում:

5.5 Գործարար հարաբերությունը կամ գործարքը պետք է համարվի կասկածելի, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարար հարաբերությունում կամ գործարքում ներգրավված են այնպիսի ֆինանսական միջոցներ կամ այլ զույք, որոնք կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ (ՀԱՎԵԼՅԱԼ ԵՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ) ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

6.1 Ընկերությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն կարող է հաստատել կամ գործարք կատարել միայն հաճախորդի նույնականացման համար սույն Քաղաքականությամբ և այլ ներքին իրավական ակտերով սահմանված տեղեկությունները ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո, այդ թվում հեռավար նույնականացման միջոցով:

6.2 Ընկերությունը հաճախորդին նույնականացնում և նրա ինքնությունը ստուգում է պետական իրավասու մարմնի կողմից տրված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի բնօրինակների, ինչպես նաև այլ տեղեկությունների հիման վրա, որոնք մանրամասն նկարագրվում են Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին Ընթացակարգով:

6.3 Հաճախորդի (այդ թվում՝ Լիազորված անձի և Իրական շահառուի) նույնականացման և ինքնության ստուգման և գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզման գործողություններն իրականացնելիս Ընկերության համար կարող են հիմք ծառայել այլ ֆինանսական կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից ՀՊՈՒ-ի արդյունքում ստացված տվյալները, պայմանով, որ՝

6.7.1 Ընկերությունը պետք է վերջնական պատասխանատվություն կրի ՀՊՈՒ-ի համար.

6.7.2 Ընկերությունը պետք է այլ ֆինանսական հաստատությունից կամ ոչ ֆինանսական հաստատությունից կամ անձից անմիջապես ստանա ՀՊՈՒ-ի համար նախատեսված տեղեկությունները.

6.4 Ընկերությունը պետք է բավարար միջոցներ ձեռնարկի հավաստիանալու, որ այլ ֆինանսական հաստատությունը կամ ոչ ֆինանսական հաստատությունը կամ անձը իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները:

6.5 Ընկերությունը հաճախորդի գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնում է դրա պատշաճ ուսումնասիրություն: Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Ընկերության կողմից հաճախորդների հետ գործարքների դիտանցումը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:

6.6 Ընկերությունը ներքին իրավական ակտերով սահմանված հաճախականությամբ թարմացնում է հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները՝ դրա արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ՄԵՐԺՈՒՄԸ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7.1 Գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, պետք է որակվի որպես կասկածելի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրվի ՀՀ ԿԲ, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարքում կամ

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ:

7.2 Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվել և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ՀՀ ԿԲ-ին չի տրամադրվել, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները Ընկերության կողմից փաստաթղթավորվում և պահպանվում են առնվազն 5 տարի՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ամփոփված երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:

7.3 Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, կամ Ընկերությունը Լիազոր մարմնից ստանում է գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման մերժման կամ դադարեցման հանձնարարական, ապա Ընկերությունը մերժում կամ դադարեցնում է գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը և դիտարկում է դրա կասկածելի որակելու հարցը:

7.4 Ընկերությունն իրավունք ունի փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում կամ, եթե Հաճախորդի մասին չի հաջողվել իրական ու ամբողջական պատկերացում կազմել Հաճախորդի նույնականացման, գործարքի, գործարար հարաբերության և սահմանված այլ տեղեկատվության վերաբերյալ կամ Լիազոր մարմնի կողմից ներկայացված անուններին (անվանումներին) կամ տիպաբանություններին համընկնող գործարար հարաբերությունների կամ գործարքների դեպքերում, մինչև 5 (հինգ) աշխատանքային օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Լիազոր մարմնին:

7.5 Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության Խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում ներառված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող դրամական միջոցներն ու արժեթղթերը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման:

7.6 Հաճախորդի գույքի սառեցում կարող է իրականացվել նաև լիազոր մարմնի որոշման հիման վրա:

7.7 Սույն Քաղաքականությամբ նախատեսված սև ցանկերում ընդգրկված անձանց արժեթղթերի կամ դրամական միջոցների սառեցման մասին որոշում ընդունելու դեպքում կասկածելի գործարքի/գործարար հարաբերության մասին հաղորդումն անհապաղ ուղարկվում է Լիազոր մարմնին:

7.8 Կասկածելի գործարքի/գործարար հարաբերության սույն Գլխով նախատեսված գործընթացների իրականացումն Ընկերությունում կարգավորվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» Ընթացակարգում ամրագրված դրույթների, Օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

ԳԼՈՒԽ 8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳԾՈՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8.1 Միջազգային պատժամիջոցները (այսուհետ՝ Պատժամիջոցներ) սահմանվում են միջազգային և միջկառավարական կազմակերպությունների կողմից ընդունված միջազգային

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

իրավական ակտերի, երկրների միջև կնքված միջազգային պայմանագրերի, տարբեր երկրների պետական մարմինների կողմից ընդունված օրենքների և իրավական այլ ակտերի միջոցով, որոնց պարբերաբար հետևում է ՆԴՄ-ն:

8.2 Ընկերությունում միջազգային պատժամիջոցների պահանջների պահպանման, կատարման և անհրաժեշտության դեպքում՝ դրանց մասին անձնակազմին ուսուցման, խնդիրների հետ կապված գործիքակազմի և գործընթացների ներդրման համակարգումն իրականացվում է ՆԴՄ կողմից:

8.3 Ընկերությունը հետևում է ՄԱԿ-ի ԱԽ-ի, ԱՄՆ պետական գանձապետարանի (OFAC), Եվրամիության (EU), Միացյալ Թագավորության (UK) և ըստ անհրաժեշտության նաև այլ երկրների, երկրների պատկան մարմինների, միջազգային կազմակերպությունների և միջկառավարական կազմակերպությունների կողմից սահմանված պատժամիջոցներին:

8.4 Ընկերությունը հետևում և պահպանում է Պատժամիջոցների հետևյալ տեսակները.

8.4.1 երկրների հանդեպ կիրառված սահմանափակումները,

8.4.2 երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների հանդեպ կիրառված սահմանափակումները,

8.4.3 անձանց հանդեպ կիրառված սահմանափակումները,

8.4.4 գույքի սառեցման պահանջները:

8.5 Ընկերության աշխատակիցները պետք է իրականացնեն հաճախորդների սպասարկումը՝ պահպանելով Ընկերության կողմից կիրառված մոտեցումը՝ երկրների հանդեպ, երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և/կամ գործունեության ոլորտների սահմանափակումների մասով:

8.6 Ընկերությունը միջազգային պատժամիջոցների պահանջների պահպանումն իրականացնում է հաճախորդների, գործընկերների, Ընկերությանը ծառայություն մատուցող անձանց, մատակարարների և բոլոր տեսակի երրորդ անձանց հետ հարաբերություններում:

8.7 ՆԴՄ-ն, ելնելով գործընկեր կառույցների մոտեցումներից և միջազգային պատժամիջոցներից բխող հնարավոր ռիսկերից և գործարար պրակտիկայում ընդունված վարքագծից կարող է առաջարկել կիրառել միջազգային պատժամիջոցների պահանջներից առավել խիստ մոտեցում, եթե ՆԴՄ կարծիքով դա անհրաժեշտ է համբավի և ֆինանսական ռիսկերը նվազեցնելու համար:

8.8 Անկախ զբաղեցրած պաշտոնից՝ Ընկերության բոլոր աշխատակիցներին արգելվում է աջակցել, անգործություն ցուցաբերել, փոխակերպել կամ քողարկել տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրականացնել հաճախորդներին միջազգային պատժամիջոցների պահանջներից խուսափելու նպատակով:

8.9 Միջազգային պատժամիջոցների ենթարկված կամ պատկան մարմինների կողմից ցուցակված անձանց համընկնությունների ստուգման համար Ընկերությունը կիրառում է ծրագրային ապահովման համակարգ և հատուկ տեղեկատվական շտեմարաններ:

8.10 Ընկերությունը շեշտադրում է իր գրոյական հանդուրժողականությունը պատժամիջոցների խախտման նկատմամբ և պատժամիջոցների ռիսկի ախորժակի շրջանակներում սահմանում է հետևյալ սահմանափակող միջոցները՝

1) մերժել ԱՄՆ գանձապետարանի (OFAC), ՄԱԿ ԱԽ-ի, ԵՄ-ի, ՄԹ-ի կողմից հրապարակվող պատժամիջոցների ցանկերում առկա ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ իրականացվող գործարքը կամ գործարար հարաբերության հաստատումը, ընդ որում, եթե գործարքի մյուս կողմն է ներառված վերոնշյալ ցանկերում: Այս դրույթը տարածվում է նաև այն

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց 50% և ավել բաժնեմաս ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն ցուցակված է վերոնշյալ ցանկերում,

2) մերժել գործարքի իրականացումը, եթե գործարքում ներգրավված երկրների կամ տարածքների, ծառայությունների և (կամ) գործունեության ոլորտների հանդեպ կիրառված են պատժամիջոցներ,

3) բլոկավորել հաճախորդի հաշվին առկա ողջ միջոցները և/կամ արժեթղթերը, եթե տվյալ հաճախորդը ցուցակվում է պատժամիջոցների ցանկերում: Սառեցումն իրականացվում է անմիջապես՝ առանց վերջինիս ծանուցելու,

4) այլ արժույթով ծառայություններ մատուցելիս բացահայտել ՀՀ-ում հաճախորդի տնտեսական շահը, պարզաբանել միջոցների գոյացման աղբյուրը, հավաստիանալ, որ միջոցները չեն գոյացել համապարփակ պատժամիջոցների ենթարկված անձանցից, թիրախային կամ ՓԼ/ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային գործունեության ոլորտներից և սույն Քաղաքականությանը կից Հավելված 1-ով սահմանափակված գործունեության տեսակներից;

8.11 Եթե գործող հաճախորդի կամ նրա գործարքների նկատմամբ որևէ պահից սկսած կիրառվում են միջազգային պատժամիջոցներ, ապա Ընկերությունը խելամիտ ժամկետում կիրառում է միջազգային պատժամիջոցներով սահմանված պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դադարեցնելով հաճախորդի հետ գործարար հարաբերությունը և/կամ մերժելով գործարքները, ինչն իրականացվում է նաև գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Նշված դրույթները կիրառելի են նաև Ընկերության գործընկերների, մատակարարների և համագործակցող այլ անձանց հետ հարաբերություններում:

8.12 Ընկերության մարքեթինգային ռազմավարությունը մշակվում է այնպես, որպեսզի չթիրախավորվեն պատժամիջոցների ենթարկված երկրների, ոլորտների և անձանց հետ առնչվող կամ վերջիններիս հետ որոշակի գործունեություն ծավալող հաճախորդները, ինչը կարող է հանգեցնել պատժամիջոցների խախտման, շրջանցման և համբավի ռիսկի առաջացման:

ԳԼՈՒԽ 9. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ

9.1. Ընկերության եռաստիճան ներքին հսկողության լիարժեք մակարդակ ապահովելու նպատակով Ներքին աուդիտը, Օրենքով սահմանված կարգով, տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ Ընկերության գործադիր տնօրենն ու Ներքին դիտարկումների մարմինն ապահովում են Ընկերության գործունեության լիարժեք համապատասխանությունն Օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերի, սույն Քաղաքականության և այլ ներքին իրավական ակտերի պահանջներին:

9.2. Ներքին աուդիտը Ընդհանուր ժողովին (պատճենը՝ Գործադիր տնօրենին) հաշվետվություն է ներկայացնում ստուգումների արդյունքում ձևավորված իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

9.3. Ներքին աուդիտը ցանկացած ստորաբաժանման ընթացիկ կամ պլանային ստուգման ընթացքում կասկածելի գործարքների կամ փողերի լվացման հավանական սխեմաների, Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա (ներքին ու արտաքին) պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում, մինչև ստուգման արդյունքների վերաբերյալ փաստաթուղթը համապատասխան իրավասու մարմնին ներկայացնելը, այդ մասին

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

պետք է տեղեկացնի Ներքին դիտարկումների մարմնին՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 10. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1 Ներքին դիտարկումների մարմինը ոչ ուշ քան կիսամյակը մեկ անգամ, կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը (եթե այլ բան նախատեսված չէ Ընկերության ներքին իրավական ակտերով և/կամ Ընդհանուր ժողովի պահանջով) կազմում և Ընկերության Ընդհանուր ժողովին է ներկայացնում Օրենքով և ներքին իրավական ակտերով սահմանված հաշվետվությունները:

10.2 Ներքին դիտարկումների մարմնի կողմից Ընկերության Ընդհանուր ժողովին ներկայացվող կիսամյակային հերթական հաշվետվությունը նվազագույնը ներառում է.

- 1) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը,
- 2) կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) թիվն ու համառոտ նկարագրությունը,
- 3) այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն ներկայացվել որպես կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ,
- 4) կասեցված կամ իրականացումը մերժված գործարար հարաբերությունների և գործարքների թիվը և համառոտ նկարագրությունը,
- 5) կասեցված գործարքների արժեքը,
- 6) սառեցված ֆինանսական միջոցների չափը,
- 7) նոր պատժամիջոցների ծրագրերի և պատժամիջոցների արդյունքում ցուցակված հաճախորդների առկայության/բացակայության վերաբերյալ տեղեկություններ,
- 8) ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող այլ հարցեր և տեղեկություններ,
- 9) Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 11. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

11.1 ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների պահպանման թեմաներով Ընկերությունն աշխատակիցների, այդ թվում Ընկերության կառավարման մարմինների, Ներքին աուդիտի համար ուսուցումը կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ, իսկ նոր ընդունված աշխատակիցների համար՝ աշխատանքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում:

11.2 ՆԴՄ-ն մշակվում և ամեն տարի թարմացնում է ուսուցման ծրագիրը, որը պարտադիր ներառում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ՀՀ օրենսդրության փոփոխությունները, միջազգային պատժամիջոցների պահպանմանն ուղղված կարգավորումը, վերջիններիս մասով Ընկերությունում ներդրված կարգավորման ու դրա փոփոխությանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև սահմանվում է ուսուցման ժամանակացույցը, որը ՆԴՄ-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներկայացվում է Գործադիր մարմնի հաստատմանը:

11.3 ՆԴՄ-ն կարող է կազմակերպվել նաև առանձին թեմատիկ, հատուկ դասընթացներ, թեստավորումներ և քննարկումներ:

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

11.4 Իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:

ԳԼՈՒԽ 12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1 Օրենքով և Քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները կարող են հավաքագրվել և պահպանվել թղթային և(կամ) էլեկտրոնային եղանակով:

12.2 Օրենքով և Քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ ՀՊՈՒ-ի ընթացքում ձեռք բերված տեղեկությունները Ընկերությունում պահպանվում են՝ անկախ գործարքը կամ գործարար հարաբերության շարունակելու կամ դադարեցվելու հանգամանքից:

12.3 Տեղեկությունները հավաքագրվում են յուրաքանչյուր հաճախորդի մասով առանձնացված փաթեթով:

12.4 Ընկերությունն Օրենքով և Քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ ՀՊՈՒ-ի ընթացքում ձեռք բերված տեղեկությունները պահպանում է գործարար հարաբերության ավարտից հետո կամ գործարքի կատարումից հետո առնվազն 5 (հինգ) տարվա ընթացքում, իսկ օրենսդրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:

12.5 Ընկերության աշխատակիցներին արգելվում է հեռացնել, կրճատել և/կամ քողարկել հաճախորդի և/կամ նրա կողմից կատարվող գործարքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 13. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

13.1 Ընկերության յուրաքանչյուր կառավարման մարմին պատասխանատվություն է կրում Օրենքով և սույն Քաղաքականությամբ իրեն վերապահված գործառույթների պատշաճ և ամբողջական իրականացման համար, ՓԼ/ԱՖ կանխարգելումն արդյունավետ կազմակերպման խոչընդոտների վերացումն կազմակերպելու համար:

13.2 Ընկերության յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար պատասխանատվություն է կրում սույն Քաղաքականությամբ սահմանված գործառույթներն ու պահանջներն իրենց ստորաբաժանումներում պատշաճ կազմակերպելու և կատարումն ապահովելու, Ներքին դիտարկումների մարմնի հետ օպերատիվ համագործակցելու համար:

13.3 Ներքին դիտարկումների մարմինը պատասխանատու է Օրենքով, Լիազորված մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն Քաղաքականությամբ սահմանված գործառույթներն ու պահանջների պատշաճ և ամբողջական կատարման համար, Ընկերության Խորհրդին, գործադիր տնօրենին և Լիազորված մարմնին հաշվետվություններ և այլ տեղեկություններ տրամադրելու համար:

13.4 Սույն Քաղաքականության պահանջները խախտելու համար գործադիր տնօրենը , Սպասարկող ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները պատասխանատվություն

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն	Ուժի մեջ է 22.08.24թ. Խմբագրություն N 2
-------------------	---	--

են կրում Օրենքով, Ընկերության ներքին իրավական ակտերով և/կամ իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 15. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Սույն Քաղաքականությամբ չկանոնակարգված ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող հարցերը սահմանվում են Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության Ներքին աուդիտի գործունեության Քաղաքականության, Հաշվետվությունների ներկայացման կարգի, Ժամկետների և պատասխանատվության վերաբերյալ կանոնակարգերի ներքին իրավական ակտերով:

15.2. Սույն Քաղաքականությունը հաստատվում և փոփոխվում է Ընդհանուր ժողովի կողմից և դրանում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում Տնօրինության կողմից հաստատման պահից:

15.3. Քաղաքականությունը պետք է վերանայվի առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև Օրենքում և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում էական փոփոխություններին համապատասխանեցնելու անհրաժեշտության դեպքում: Սույն Քաղաքականության և դրա փոփոխությունների նախագծերը մշակվում և հաստատմանն է ներկայացվում Ներքին դիտարկումների մարմնի կողմից:

15.4. Սույն Քաղաքականության (դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները) հաստատման պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացվում է Լիազոր մարմնին:

Հավելված 1

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Քաղաքականություն

Աղյուսակ 1

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակի որակական չափանիշներ, այդ թվում՝ գործարար հարաբերության չհաստատման դեպքերը, բարձր ռիսկային չափանիշով որակվող կամ սահմանափակումների կիրառման դեպքերը.

	Նկարագրություն	Ռիսկ ախորժակ	Մեկնաբանություն
1.	Անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ	Արգելված	-
2.	Միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ	Արգելված	-
3.	Ըստ ներկայացնողի արժեթղթեր	Արգելված	-
4.	Որևէ տեսակի գործարար հարաբերություն կեղծ բանկերի կամ այն ֆինանսական հաստատությունների հետ, որոնք սպասարկում են կեղծ բանկերի	Արգելված	-

5.	ՖԱԹՖ-ի «սև ցանկերում» ¹ ներառված երկրներում գրանցված կամ գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք կամ այդ երկրներում բնակվող ֆիզիկական անձինք:	Արգելված	-
6.	ՕՖԱԿ-ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում ներառված անձինք:	Արգելված	-
7.	Իրավաբանական անձինք, որոնց 50% և ավել բաժնեմասին տիրապետող բաժնետերերը գտնվում են ՕՖԱԿ-ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում:	Արգելված	-
8.	Հանրամատչելի հավաստի աղբյուրներում և լայնորեն կիրառվող տեղեկատվական շտեմարաններում (օր. Worldcheck, Accuity) որպես «պատժամիջոցների հետ ասոցացվող անձ» բնութագրվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ - անձինք, ովքեր ունեն ուղղակի կապ պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների հետ, օրինակ՝ ցանկերում ներառված անձանց ընտանիքի անդամներ, այդ թվում՝ կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, իրավաբանական անձանց դեպքում՝ սեփականատերեր, իրական շահառու, իրավաբանական անձի կառուցվածքում	Արգելված	-

¹ <https://www.fatf-gafi.org/content/fatf-gafi/en/publications/High-risk-and-other-monitored-jurisdictions/Call-for-action-june-2024.html>

	բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք ²		
9.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր ներգրավված են ՓԼ/ԱՖ և ՁՈՁ ՏՖ հանցագործություններում	Արգելված	Այդ թվում որպես կասկածյալ, մեղադրալ, դատապարտյալ
10.	ԱՖ և ՁՈՁ ՏՖ տեսանկյունից ռիսկային երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող ֆիզիկական և իրավաբանական անձինք ³	Արգելված/սահ մանափակ	Այս երկրների հաճախորդների նկատմամբ կարող է կիրառվել ՀՊՈԻ և սպասարկել, եթե առկա են ողջամիտ բացատրություններ և փաստաթղթային հիմքեր, որոնց առկայությամբ հավաստվում է հայաստանյան ֆինանսական կամ ոչ ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական կամ այլ իրավաչափ հիմնավորումների առկայությունը:
11.	Կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրներում գրանցված, այդ երկրների ռեզիդենտ և կոռուպցիոն ռիսկերով բնութագրվող ոլորտներում (կառուցապատման ոլորտ, դեղագործական ոլորտ (թմրանյութեր), առողջապահություն, զենքի առևտուր, հանքարդյունաբերություն) գործունեություն ծավալող անձինք ⁴	Սահմանափակ/բարձր ռիսկ	Գործարար հարաբերություն կարող է հաստատվել բացառապես այն դեպքում, եթե ի լրումն օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ՀՊՈԻ համար պահանջվող տեղեկությունների ամբողջական ձեռքբերման, հաշիվ բացող ընկերությունը ունի և կիրառում է հակակոռուպցիոն քաղաքականություն, ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների կանխարգելման ընթացակարգեր,

² Խորհրդի/վարչության/գործադիր մարմնի անդամներ

³ Երկրների ցանկը սահմանվում է հիմք ընդունելով ՓԼ/ԱՖ և ՁՈՁ ՏՖ ազգային ռիսկերի գնահատման շրջանակներում Լիազոր մարմնի կողմից առանձնացված երկրների ցանկը:

Աֆղանստան, Հորդանան, Լիբանան, Սիրիա, Թուրքիա, Իրաք, Պակիստան, Լիբիա, Նիգերիա, Չադ, Սուդան, Եմեն, Բանգլադեշ, Մալի, Սոմալիա, Նիգերիա

⁴ Կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրների ցանկը սահմանվել է հիմք ընդունելով «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2023» հաշվետվությունը (https://transparency.org.au/wp-content/uploads/2024/01/Report_CPI2023_English.pdf): Որպես բարձր ռիսկային դիտարկվել են համապատասխան սանդղակով 40-ից ցածր գնահատված երկրները

			և համացանցում կամ մասնավոր տեղեկատվական շտեմարաններում բնութագրվում է որպես ոլորտի առաջատար հեղինակավոր կազմակերպություն:
12.	Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, վերջիններիս հետ փոխկապակցված անձինք և ընտանիքի անդամները կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրներից ⁵	Արգելված/ Սահմանափակ	Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ի լրումն օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ՀՊՈԻ համար պահանջվող տեղեկությունների ամբողջական ձեռքբերման, հստակ հիմնավորվում է եկամտի աղբյուրը, անձի աշխատավարձը համադրելի է ունեցվածքի հետ, իսկ հանրամատչելի աղբյուրներում և մասնավոր տեղեկատվական շտեմարաններում բացակայում են բացասական բնույթի, մասնավորապես՝ կոռուպցիոն բնույթի տեղեկությունները ինչպես տվյալ անձի այնպես էլ վերջինիս հետ փոխկապակցված անձանց և ընտանիքի անդամների վերաբերյալ: Այս տեսանկյունից առաջարկվում է «Ճանաչիր քո հաճախորդի» գործընթացի շրջանակներում անհրաժեշտ է տեղեկություններ ձեռք բերել քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց և վերջինիս ընտանիքի անդամների վերաբերյալ:

Ալգերիա, Անգոլա, Բենին, Բուրան, Բոթսվանա , Բրիտանական Վիրջինյան Կղզիներ, Բուրկինա Ֆասո, Կամբոջիա, Կամերուն, Կապե Վերդե, Կայմանյան կղզիներ, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չադ, Կոտ դ'Իվուարի Հանրապետություն, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Դանիա, Էսվաթինի, Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետություն, Գաբոն, Գամբիա, Գվինեա, Գվինեա Բիսու, Հաիթի, Իսլանդիա, Քենիա, Լաո, Լիբերիա, Մադագասկար, Մալի, Մավրիտանիա, Մոնգոլիա, Մոզամբիկ, Մյանմար, Նեպալ, Նիգերիա, Պակիստան, Կոնգո, Սենյոր Կիտս և Նեվիս, Սենյոր Լուսիա, Սենեգալ, Սիեռա Լեոն, Սոլոմոն կղզիներ, Շրի Լանկա , Սուրինամ, Տանզանիա, Տոգո, Թունիս, Թուրկս և Կայոս կղզիներ, Ուգանդա, Վանատու, Վենեսուելա , Վիետնամ, Զիմբաբվե:

⁵ Տես նախորդ ծանոթագրությունը:

13.	Թրաքեր և համանման այլ իրավաբանական կազմավորումներ, ինչպես նաև բարդ կառուցվածք ունեցող իրավաբանական անձինք, որոնք գրանցված են կամ ռեգիստրացիայի են կամ գործունեություն են ծավալում թափանցիկության և տեղեկատվության փոխանակման անարդյունավետ ռեժիմներ ունեցող երկրներում ⁶	Արգելված	-
14.	Առանց լիցենզիայի գործունեություն ծավալող կազմակերպություններ, եթե գործունեության վայրի երկրի օրենսդրությամբ համապատասխան ոլորտը ենթակա է լիցենզավորման	Արգելված	-
15.	Մեծահասակների զվարճանքի կազմակերպմամբ զբաղվող կազմակերպություններ	Արգելված	-
16.	Զենքի առուվաճառքով զբաղվող կազմակերպություններ	Արգելված	Բացառությամբ ՀՀ Պաշտպանության նախարարության
17.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք ներդրումներ են կատարում կրիպտոակտիվների ոլորտում	Բարձր ռիսկ	Օր.Տարբերության պայմանագրեր (Contract for difference), որոնց դեպքում հաճախորդը փաստացի չի տիրապետում այդ ակտիվներին:
18.	Դեսպանատներ, հյուպատոսություններ և համանման ներկայացուցչություններ	Բարձր ռիսկ	

⁶ Որպես տեղեկատվության փոխանակման և թափանցիկության անարդյունավետ ռեժիմ ունեցող երկրներ առաջարկվում է դիտարկել ՖԱԹՖ և ՖԱԹՖ տիպի տարածաշրջանային կառույցների գնահատումներով «Անմիջական արդյունք 2 (Միջազգային համագործակցություն)» և «Անմիջական արդյունք 5 (Իրավաբանական անձինք և կազմավորումներ)» միաժամանակ որպես արդյունավետության «Ցածր» մակարդակ ունեցող գնահատված երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող իրավաբանական կազմավորումներին, այդ թվում թրաքերին: Համապատասխան երկրների ցանկը ներկայացված է 2024 թվականի մարտի դրությամբ: (<https://www.fatf-gafi.org/en/publications/Mutualevaluations/Assessment-ratings.html>):

19.	Ոչ առևտրային կազմակերպություններ, բացառությամբ ԱՖ տեսանկյունից ռիսկային երկրների հետ կապ ունեցող կազմակերպությունների	Բարձր ռիսկ	-
20.	Ատոմային էներգիայի ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններ	Բարձր ռիսկ	Բացառությամբ ՀՀ գերատեսչությունների հսկողության ներքո գտնվող ընկերությունների
21.	Կոռուպցիոն ռիսկերով բնութագրվող ոլորտներում (կառուցապատման ոլորտ, դեղագործական ոլորտ (թմրանյութեր), առողջապահություն, զենքի առևտուր, հանքարդյունաբերություն) գործունեություն ծավալող իրավաբանական անձինք, որոնք չեն առնչվում կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրների հետ	Բարձր ռիսկ	-
22.	Կանխիկի լայնածավալ կիրառությամբ բնութագրվող կազմակերպություններ (այդ թվում՝ ռեստորաններ, մանրածախ խանութներ, խմիչքի խանութներ, ծխախոտի մատակարարներ և այլն), որոնք չեն առնչվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարական բացեր ունեցող երկրների հետ	Բարձր ռիսկ	-
23.	Խոշոր ունեցվածք ունեցող անձինք (High net worth individuals), ովքեր ունեն նվազագույնը 1 մլն. ԱՄՆ դոլար բարձր իրացվելի ակտիվներ կամ կանխիկ միջոցներ	Բարձր ռիսկ	-
24.	Թրասթեր և համանման այլ իրավաբանական կազմավորումներ, ինչպես նաև բարդ կառուցվածք	Բարձր ռիսկ	

	ունեցող իրավաբանական անձինք (բացառությամբ արգելված երկրներում գրանցված, գործունեություն ծավալող իրավաբանական անձանց և կազմավորումների)		
25.	Հանքաարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններ	Բարձր ռիսկ /սահմանափակ /արգելված	Նշված ոլորտի թափանցիկության վերաբերյալ առկա է երկրների միություն՝ Extractive Industries Transparency Initiative (EITI), որին անդամակցող երկրների ռեզիդենտ կազմակերպությունները կարող են դասվել որպես բարձր ռիսկ, մյուսները՝ սահմանափակ կամ արգելված՝ կախված Ընկերության կողմից սահմանած երկրների ռիսկից կամ սահմանափակման բնույթից
26.	Թանկարժեք քարերի և մետաղների արդյունահանում և մշակում իրականացնող ընկերություններ	Բարձր ռիսկ	
27.	Հաճախորդներ, որոնց սպասարկումը Ընկերության ՆԴՄ հիմնավոր կարծիքով և/կամ Լիազոր մարմնի կողմից ստացված ազդակների հիման վրա պարունակում է համբավի էական ռիսկեր, անկախ սույն փաստաթղթում նշված ռիսկ ախորժակից:	Բարձր ռիսկ / սահմանափակ	

Աղյուսակ 2

Ռիսկ ակտորժակի քանակական չափանիշները

	Նկարագրություն	Ներկայիս ցուցանիշ	Ռիսկ ակտորժակ	Ընդհանուր ժողովի կողմից հաստատվող շեղումներ	Մեկնաբանություն
1.	Ոչ ռեզիդենտների տեսակարար կշիռն ընդհանուր բազայում	49%	55%	5%	Տարին մեկ անգամ իրականացնել տվյալների թարմացում և ռիսկի վերագնահատում
2.	Բարձր ռիսկային հաճախորդների քանակն ընդհանուր բազայում	17.2%	20%	3%	6 ամիսը մեկ անգամ իրականացնել տվյալների թարմացում և ռիսկի վերագնահատում
	Այդ թվում՝ բարձր ռիսկի մեջ				
3.	Բարձր ռիսկային ֆիզիկական անձանց տեսակարար կշիռ	54%	55%	3%	Յուրաքանչյուր եռամսյակ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հաշվետվության մեջ ներկայացնել բազայի կառուցվածքը
3.1	ՔԱԱ-ների/մեծ ունեցվածքի տեր հաճախորդների տեսակարար կշիռը բարձր ռիսկային ֆիզիկական անձանց մեջ	58%	60%	3%	

4.	Բարձր ռիսկային իրավաբանական անձանց տեսակարար կշիռ	46%	45%	3%	
4.1	Բարձր ռիսկային ֆինանսական կազմակերպությունների տեսակարար կշիռը բարձր ռիսկային իրավաբանական անձանց մեջ	33%	35%	1%	
5.	Ընկերություններ, որոնց բաժնետիրական կառուցվածքում ներառված մասնակիցը/ները գտնվում են ՕՖԱԿ-ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում և որոնց բաժնեմասի հանրագումարը չի գերազանցում 50%-ը:	< 0,5%	1 %	1 %	Պայմանով, որ ընկերությունը կարողանում է իրականացնել ՀՊՈԻ տվյալ հաճախորդների գործարքների մասով: